ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 25-27-ը ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2023 թվականի հոկտեմբերի 25-27-ը

4. Հրավիրող կողմը՝

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

«British Expertise International» կազմակերպության

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն հայ-բրիտանական գործարար համաժողովին, ինչպես նաև մի շարք հետ երկկողմ հանդիպումներին

Քննարկված թեմաները՝

- ✓ Հայ-բրիտանական առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման հնարավորություններ,
- ✓ Հայաստանի գործարար միջավայր,
- ✓ Հայ և բրիտանացի գործարարների համագործակցության ձևավորման և Հայաստան ներդրումների ներգրավմանն առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2023թ. հոկտեմբերի 26-ին «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության, Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության դեսպանության և «British Expertise International» կազմակերպության հետ համատեղ կազմակերպել են հայ-բրիտանական գործարար համաժողով, նպատակ ունենալով՝ խրախուսել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը Հայաստան, ինչպես նաև բարձրացնել Հայաստանի՝ որպես ներդրումային գրավչությամբ ուղղության հեղինակությունը միջազգային հարթակներում և զարգացնել օտարերկրյա պետությունների հետ առևտրատնտեսական կապերը:

Համաժողովին մասնակցել են շուրջ 100 հայ և բրիտանացի գործարարներ և պետական հատվածի ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկվել են տնտեսության ոլորտի ընդհանուր խնդիրներին, գործարար միջավայրին, ինչպես նաև էներգետիկ, ենթակառուցվածքային, լոգիստիկ և տեխնոլոգիական հնարավորություններին վերաբերող հարցեր:

Միջոցառման ընթացքում նախարար Վ.Քերոբյանը հանդես եկավ ելույթով և համառոտ ծանոթացրեց կառավարության ծրագրի տնտեսական հատվածի հիմնական դրույթներին, դրանց իրագործման նպատակով նախանշված միջոցառումներին, ներկայացրեց իրականացվող բարեփոխումները:

Համաժողովի ընթացքում ՆԱԿ ներկայացուցիչները հանդես են եկել Հայաստանի ներդրումային միջավայրը և գործարար հնարավորությունները ներկայացնող «Invest in Armenia» շնորհանդեսով: Պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել ՄԹ պետական հատվածի և գործարար համայնքի ներկայացուցիչների հետ:

Նախարար Վահան Քերոբյանը հոկտեմբերի 26-ին Լոնդոնում հանդիպել է Բիզնեսի և առևտրի պետական դեպարտամենտի նախարար Տիմոթի Մինտոյի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաև Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

Հանդիպմանը քննարկվել են առևտրի, ծառայությունների և ներդրումների հետ կապված հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ուղիղ չվերթների կազմակերպման հնարավորությանը:

Նախարար Վահան Քերոբյանը հոկտեմբերի 26-ին Լոնդոնում հանդիպում է ունեցել HSBC բանկի ներկայացուցիչների հետ՝ կապիտալի շուկաներ հայկական ընկերությունների մուտքի հնարավորությունը քննարկելու նպատակով: Հանդիպմանը մասնակցել են ներկայացուցիչներ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, «World Trade Center Yerevan»-ից, «ASCE Group» ԲԲԸ-ից, «Երեմյան Փրոջեքթս» ՍՊԸ-ից, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից, Berkeley Capital-ից, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի Ներկայացուցչություն-ից (EBRD):

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են հայաստանյան խոշոր կազմակերպությունների կողմից հնարավոր պարտատոմսերի թողարկմանը արևմտյան կապիտալի շուկայում ու արևմտյան շուկաներից ներդրումների ներգրավմանը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները, թողարկման օպտիմալ լուծումները գտնելու համար:

Վահան Քերոբյանը հանդիպում է ունեցել նաև Առևտրի պալատի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանում առևտրի պալատների համակարգն առավել արդյունավետ դարձնելուն ուղղված բարեփոխումների իրականացմանը և այն գործիքակազմի տրամադրմանը, ինչը թույլ կտա բարձրացնել այդ կառույցների գործունեության արդյունավետությունը:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի և Մեծ Բրիտանիայի միջև առևտրային և գործարար կապերի ընդլայնմանը և Մեծ Բրիտանիայում կազմակերպվող ոլորտային ցուցահանդեսներին հայ գործարարների առավել ակտիվ մասնակցությանը:

Լոնդոն կատարած այցի շրջանակում հոկտեմբերի 27-ին նախարար Վահան Քերոբյանը հանդիպեց JP Morgan խոշորագույն բանկային և ներդրումային կորպորացիայի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են ներկայացուցիչներ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, «World Trade Center Yerevan»-ից, «ASCE Group» ԲԲԸ-ից, «Երեմյան Փրոջեքթս» ՍՊԸ-ից, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից, Berkeley Capital-ից, «IMEX Group» ՍՊԸ-ից:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին խոշոր կորպորատիվ բիզնեսի համար միջազգային շուկաների հասանելիության ապահովման, ինչպես նաև գյուղատնտեսության, արդյունաբերության, հեռահաղորդակցության և այլ ոլորտների կազմակերպություններին վերաբերող ծրագրերի իրականացման համար միջազգային շուկաներից ներդրումների ներգրավման հնարավորությունները:

Կողմերը պայմանավորվել են շարունակել աշխատանքները՝ հետագա համատեղ քայլերը հստակեցնելու նպատակով:

Համաժողովին մասնակցել են ֆինանսական, խորհրդատվական, ապահովագրական արդյունաբերական ընկերություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- ✓ Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները հայ-բրիտանական տնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներ և ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

- ✓ HSBC բանկի ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ շարունակել քննարկումները, օպտիմալ թողարկման լուծումները գտնելու նպատակով:
- ✓ Առևտրի պալատի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել աշխատանքները՝ հետագա համատեղ քայլերը հստակեցնելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

06.11.2023թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 1032-Ա որոշման առ 17.10.2023թ. և 1043-Ա որոշման առ 20.10.2023

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Վահան Քերոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2023 թվականի հոկտեմբերի 25-27-ը**

5. Գործուղման վայրը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մայրաքաղաք Լոնդոն

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

■ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Վահան Քերոբյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	311,698	311,698
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USA)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	63,649	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	127,297	127,297
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		438,995	438,995

*01.11.2023թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1USD=402.39 դրամ
*01.11.2023թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1GBP=488.46 դրամ

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ